ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի դեկտեմբերի 12-13-ը
Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Գագիկ Մկրտչյան
   Արմեն Եգանյան
2. **Զբաղեցրած պաշտոնները՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արդյունաբերական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի դեկտեմբերի 12-13-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը**
   2018թ. հոկտեմբերի 22-24-ը ՀՀ մայրաքաղաք Երևանում կայացել է «Եվրասիական շաբաթ» միջազգային համաժողովը, որի շրջանակներում ստեղծվել է «ԵԱՏՄ շուկայում արտահանմանն ուղղված ոսկերչական միասնական բրենդի» նպատակով աշխատանքային խումբ, որի անդրանիկ նիստը նախատեսված էր դեկտեմբերի 12-ին:

5. **Քննարկված թեմաները**
   Քննարկվել է «ԵԱՏՄ շուկայում արտահանմանն ուղղված ոսկերչական միասնական բրենդի» ճանապարհային քարտեզի ձևավորման սկզբունքային մոտեցումները:
   Հայկական պատվիրակության կողմից ելույթով հանդես է եկել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական Գագիկ Մկրտչյանը:

6. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**
   Ընթացքում ուսումնասիրվել է «ԵԱՏՄ շուկայում արտահանմանն ուղղված ոսկերչական միասնական բրենդի» գործողությունների ճանապարհային քարտեզի նախագիծը և առաջարկվել է լրամշակել հետագայում քննարկելու նպատակով:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Եվրասիական Միությունում սկսվել են կոոպերացման խոշոր ծրագրեր: Այդ ուղղություններից մեկը ոսկերչական իրերի արտադրությունն է: Խնդիրը վերաբերում է ոսկերչության ոլորտում ԵԱՏՄ

անդամ-պետությունների միջև կոոպերացիայի հիման վրա համընդհանուր ոսկերչական բրենդի մշակմանը և ստեղծմանը: Ընդ որում յուրաքանչյուր անդամ-պետություն աշխատանքներին մասնակցում է իր լավագույն փորձով և ռեսուրսներով (օր. Հայաստանը՝ որակյալ աշխատուժ և դիզայներական հմտություններ, ՌԴ՝ ալմաստի հումք, ոսկի և այլն):

Միջոցառման ակնկալվող արդյունքը Եվրասիական տարածքից երրորդ երկրներ արտահանման ծավալների էականորեն ավելացումն է, անդամ-պետությունների միջև գործարար կապերի և համագործակցության ամրապնդումը:

8. **Գործուղվողները**
Գագիկ Մկրտչյան
Արմեն Եգանյան

17.12.2018թ.